

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» «-----» 2019թ.

N----Ն

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի
N46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N46-Ն որոշման (այսուհետև՝ Որոշում) նախաբանում «Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետին, 54.1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասերին» բառերը փոխարինել «օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետին և 84-րդ հոդվածի 1-ին մասին» բառերով:

2. Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի (այսուհետև՝ Հավելված) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Երևանի քաղաքապետին կից ձևավորվում և գործում են հետևյալ խորհուրդները.

- 1) համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման,
- 2) քաղաքաշինական,
- 3) շրջակա միջավայրի պահպանության,
- 4) առևտրի և ծառայությունների, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման,
- 5) առողջապահության,
- 6) սպորտի և առողջ ապրելակերպի,
- 7) սոցիալական պաշտպանության,
- 8) կրթության,
- 9) մշակույթի,
- 10) զբոսաշրջության,
- 11) երիտասարդության հարցերի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՄ ՔԱՅԼԸ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Գ. ԵՐԻՑՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N46-Ն որոշմանն մեջ 4-րդ կետի 7-րդ ենթակետի խորհրդի անվանումը՝ «Կրթության, մշակույթի, զբոսաշրջության և երիտասարդության հետ տարվող աշխատանքների» շատ լայն է և ընդհանրական, ինչը թույլ չի տալու իրականացնել արդյունավետ և թիրախավորված թեմատիկ աշխատանք՝ հաշվի առնելով, որ խորհրդի անդամների քանակը ընդամենը 20 է: Անհրաժեշտ է առանձնացնել «Երիտասարդության հարցերի» խորհուրդը, որտեղ ներգրավված կլինեն երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ, երիտասարդական քաղաքականության փորձագետներ և երիտասարդական աշխատողներ: Հակառակ դեպքում երիտասարդության ոլորտը մնալու է անտեսված:

Նախագծով առաջարկվում է նաև առանձնացնել «Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի» խորհուրդը և ձևավորել «Սպորտի և առողջ ապրելակերպի» և «Առողջապահության» առանձին խորհուրդներ: Սա նույնպես թույլ կտա ներգրավել տվյալ ոլորտի մասնագետներ և իրականացնել արդյունավետ և թիրախավորված աշխատանք:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Գ. ԵՐԻՑՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N46-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N46-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՍԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Գ. ԵՐԻՑՅԱՆ